



# «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
«ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ  
Խորհրդի 29.04.2019 թվականի թիվ 24 որոշմամբ  
(Ուժի մեջ է՝ 01.05.2019թ. -ից)

## ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Փաստաթղթի կոդ՝ Պ750-01-05  
Խմբագրություն՝ 01  
(Ակտիվի դաս՝ Հրապարակային)



**ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

- 1.1. Ուղևորների ապահովագրության պայմանները (այսուհետ՝ Պայմաններ) մշակված են համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) և այլ իրավական ակտերի (միասին այսուհետ՝ ՀՀ օրենսդրություն):
- 1.2. «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» Ապահովագրական Մահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրված թիվ 0006(0009) լիցենզիայի հիման վրա իրականացնում է «Ֆինանսական վնասների ապահովագրություն», «Դժբախտ պատահարներից ապահովագրություն (ներառյալ՝ արդյունաբերական վնաս և մասնագիտական գործունեության ընթացքում ձեռք բերված հիվանդություններ)», «Գույքին հասցված այլ վնասներից ապահովագրություն» դասերի ապահովագրություն՝ սույն Պայմանների հիման վրա կնքելով Ուղևորների ապահովագրության պայմանագիր կամ Վկայագիր:
- 1.3. Սույն Պայմաններով սահմանված դրույթները պարտադիր են Ապահովագրողի, Ապահովադրի, Ապահովագրված անձանց և Շահառուի կողմից կատարման համար: Սույն Պայմաններում պարունակվող դրույթները կարող են փոփոխվել (բացառվել կամ լրացվել) կողմերի համաձայնությամբ՝ ապահովագրական պայմանագիր կնքելիս կամ դրա գործողության ժամկետի ընթացքում, եթե այդ փոփոխությունները գրավոր են և չեն հակասում գործող օրենսդրությանը: Ապահովագրության Վկայագրի դրույթները, որոնք տարբերվում են սույն Պայմաններում առկա դրույթներից, գերակա են:
- 1.4. Ապահովագրության օբյեկտը, Ապահովագրական պատահարները (ռիսկերը), Հիմնական բացառությունները, Պայմանագրի կնքման կարգը, ժամկետները, Ապահովագրական հատուցումը, Կողմերի գործողությունները պատահարի դեպքում, Ապահովագրական պահանջի կարգավորման գործընթացը սահմանվում են սույն Պայմանների Բաժին 5-ի յուրաքանչյուր ենթաբաժնի համար առանձին:

**ԲԱԺԻՆ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 2.1. **Ապահովագրող**՝ «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍՊԸ /այսուհետ՝ Ընկերություն/.
- 2.2. **Ապահովադիր**՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը համաձայն սույն Պայմանների, ապահովագրության պայմանագիր է կնքել է Ապահովագրողի հետ.
- 2.3. **Ապահովագրված անձ**՝ Ապահովադրի կողմից Պայմանագրում նշված 2-85 տարեկան ֆիզիկական անձ, ում հետ կապված ապահովագրական պատահարի առաջացումը հանդիսանում է Պայմանագրի առարկա: Ապահովագրված անձը հանդիսանում է շահառու, ով իրավունք ունի ապահովագրական պատահարի տեղի ունենալու դեպքում ստանալ ապահովագրական հատուցում.
- 2.4. **Շահառու**՝ ապահովագրության պայմանագրով կամ Վկայագրով նախատեսված անձ, ով ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում ունի ապահովագրական հատուցում ստանալու իրավունք: Սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագրի շրջանակներում Շահառուն Ապահովագրված անձն է: Ապահովագրված անձի մահվան դեպքում նրա ժառանգները ճանաչվում են որպես Շահառու.
- 2.5. **Ապահովագրության պայմանագիր**՝ սույն Պայմանների հիման վրա կնքված ապահովագրության պայմանագիր կամ Վկայագիր.
- 2.6. **Ապահովագրության ժամկետ**/Ապահովագրողի պատասխանատվության ժամկետ՝ Ապահովագրության պայմանագրով սահմանված ժամկետ, որի ընթացքում Ապահովագրված անձը համարվում է ապահովագրված: Սույն Պայմանների վրա կատարված ապահովագրությունը տարածվում է միայն Ապահովագրության ժամկետում տեղի ունեցած իրադարձությունների վրա.
- 2.7. **Ապահովագրական պատահար**՝ դեպք կամ իրադարձություն, որի տեղի ունենալը կրում է հավանական, անսպասելի և (կամ) պատահական բնույթ և որի տեղի ունենալու պարագայում Ապահովագրողը պարտավորվում է Ապահովադրին (Ապահովագրված անձին) վճարել ապահովագրական հատուցում.
- 2.8. **Ապահովագրական գումար**՝ Ապահովագրողի կողմից վճարման ենթակա հնարավոր ապահովագրական հատուցման առավելագույն չափ.
- 2.9. **Ապահովագրավճար**՝ Պայմանագրով սահմանված չափով Ապահովադրի կողմից Ապահովագրողին հնարավոր ապահովագրական հատուցման դիմաց վճարվելիք գումար.
- 2.10. **Ապահովագրական սակագին**՝ Ապահովագրական գումարի նկատմամբ ապահովագրավճարի դրույքաչափ տոկոսային արտահայտությամբ.



- 2.11. Զհատուցվող գումար (ֆրանշիզա)**՝ Ապահովադրի մասնակցության չափը վնասի հատուցմանը, որը սահմանվում է Պայմանագրով կոնկրետ գումարի կամ Ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսի տեսքով: Պայմանագրով կարող է սահմանվել պայմանական կամ ոչ պայմանական չհատուցվող գումար.
- 2.11.1. Պայմանագրում պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասի չափը չի գերազանցում Պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը, և պարտավոր է վճարել Ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, եթե դրա մեծությունը գերազանցում է չհատուցվող գումարի չափը:
- 2.11.2. Պայմանագրում ոչ պայմանական չհատուցվող գումար սահմանված լինելու դեպքում Ապահովագրողն ազատվում է Պայմանագրով սահմանված ոչ պայմանական չհատուցվող գումարի մասով հատուցում իրականացնելուց անկախ վնասի և կորստի չափից:
- 2.12. Դժբախտ պատահար**՝ Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովագրված անձի կամքից անկախ տեղի ունեցած հանկարծակի, պատահական, անսպասելի, կարճաժամկետ (մինչև մի քանի ժամ տևողությամբ), ոչ կենսաբանական, արտաքին ազդեցություն ունեցող իրադարձություն (դեպք), որի հետևանքով առաջանում է Ապահովագրված անձի աշխատունակության ժամանակավոր և (կամ) մշտական կորուստ և (կամ) մահ:
- 2.13. Ուղեբեռ**՝ Ապահովագրված անձի անձնական իրերը (ներառյալ արտաքին փաթեթավորումը՝ ճամպուրկ, պայուսակ, մեջքի պայուսակ և այլն, բացառությամբ՝ թղթե, պոլիէթիլենային, սովարաթղթե, փայտյա փաթեթավորման), որոնք հանձնվում են Փոխադրողին փոխադրման համար սահմանված կարգով: Ձեռքի ուղեբեռը, համաձայն սույն պայմանների, չի ճանաչվում որպես ուղեբեռ.
- 2.14. Ուղեբեռի ապահովագրական արժեք**՝ ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ գույքի փաստացի արժեքը: Փաստացի արժեքը որոշվում է պատահարի օրվա դրությամբ նմանատիպ իր ձեռք բերելու համար անհրաժեշտ գումարի չափով՝ նվազեցված մաշվածության չափով:
- 2.15. Ուղեբեռի ամբողջական տեղ**՝ փոխադրման հանձնված բեռի համապատասխան փաստաթղթերի հիման վրա Փոխադրողի կողմից տրամադրված տեղ.
- 2.16. Փոխադրում**՝ Ապահովագրված անձի տեղափոխումը օդային, ցամաքային, երկաթուղային, ծովային տրանսպորտով.
- 2.17. Փոխադրող**՝ իրավաբանական անձ կամ անհատ ձեռներեց, ով մատուցում է ուղևորների, ուղեբեռների փոխադրման ծառայություններ
- 2.18. Փոխադրում «ՄԵԿՆՈՒՄ».**
- ցամաքային, երկաթուղային, ծովային տրանսպորտով մեկնման վայրից Ապահովագրված անձի՝ տրանսպորտային միջոց նստելու և ժամանման վայրում Ապահովագրված անձի՝ տրանսպորտային միջոցից իջնելու ժամանակահատվածների միջև ընկած տևողություն.
  - օդային փոխադրման դեպքում Ապահովագրված անձի՝ մեկնման վայրի օդանավակայանում մինչև ինքնաթիռ բարձրանալը նախաթռիչքային ստուգում անցնելու պահից մինչև ժամանման վայրի օդանավակայանից Ապահովագրված անձի դուրս գալու պահը ընկած ժամանակահատվածը, ներառյալ միջանկյալ /տարանցիկ/ օդանավակայաններում գտնվելու ժամանակահատվածը՝ պայմանով, որ Ապահովագրված անձը գտնվել է օդանավակայանի շենքի տարածքում.
- 2.19. Փոխադրում «ԺԱՄԱՆՈՒՄ».**
- ցամաքային, երկաթուղային, ծովային տրանսպորտով ժամանման վայրից Ապահովագրված անձի՝ տրանսպորտային միջոց նստելու և մեկնման վայրում Ապահովագրված անձի՝ տրանսպորտային միջոցից իջնելու ժամանակահատվածների միջև ընկած տևողություն.
  - օդային փոխադրման դեպքում Ապահովագրված անձի՝ ժամանման վայրից օդանավակայանում մինչև ինքնաթիռ բարձրանալը նախաթռիչքային ստուգում անցնելու պահից մինչև մեկնման վայրի օդանավակայանից Ապահովագրված անձի դուրս գալու պահը ընկած ժամանակահատվածը, ներառյալ միջանկյալ /տարանցիկ/ օդանավակայաններում գտնվելու ժամանակահատվածը՝ պայմանով, որ Ապահովագրված անձը գտնվել է օդանավակայանի շենքի տարածքում.
- 2.20. Ուղևորություն**՝ Փոխադրում «ՄԵԿՆՈՒՄ» և Փոխադրում «ԺԱՄԱՆՈՒՄ» միջև ընկած ժամանակահատված.



- 2.21. **Տարանցիկ ուղևոր՝** - Ապահովագրված անձ, ով Փոխադրում «ՄԵԿՆՈՒՄ» կամ Փոխադրում «ԺԱՄԱՆՈՒՄ» փոխադրումները (թռիչքներն) իրականացնում է մի քանի, տարանցիկ փոխադրումներով (չվերթներով)։
- 2.22. **Ընտանիքի անդամ՝** Ապահովագրված անձի ամուսինը, ծնողները, ամուսնու ծնողները, երեխաները, երեխաների ամուսինները, եղբայրներ և քույրեր, թոռները։

**ԲԱԺԻՆ 3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ՉՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ**

- 3.1. Ապահովագրական գումարը Ապահովագրողի պատասխանատվության առավելագույն մեծությունն է, որի չափը սահմանվում է Բաժին 5-ի յուրաքանչյուր Ենթաբաժնի համար առանձին։
- 3.2. Ապահովագրության պայմանագրով ապահովագրական գումարները սահմանվում են ՀՀ դրամով։
- 3.3. Ապահովագրության պայմանագրով Ապահովադրի (Ապահովագրված անձի) ցանկությամբ կարող է սահմանվել Չհատուցվող գումար։

**ԲԱԺԻՆ 4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ, ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ, ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ**

- 4.1. Ապահովագրավճարը հաշվարկվում է Ապահովագրողի կողմից Պայմանագրի գործողության ողջ ժամկետի համար Ապահովագրական սակագնի հիման վրա, որը ձևավորվում է Ապահովադրի կողմից ընտրված Ապահովագրության փաթեթից, Չհատուցվող գումարի տեսակից ու մեծությունից և ապահովագրական ռիսկի վրա ազդող այլ գործոններից։
- 4.2. Ապահովագրավճարն Ապահովադրի կողմից վճարվում է միանվագ, կանխիկ կամ փոխանցումով՝ Պայմանագրի կնքման պահին, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ։
- 4.3. Եթե Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 3-օրյա ժամկետում Ապահովադիրը չի վճարում Ապահովագրավճարը, ապա Ապահովագրողն իրավունք ունի միակողմանի լուծելու Պայմանագիրը, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ։

**ԲԱԺԻՆ 5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ**

**ԵՆԹԱԲԱԺԻՆ Ա. ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ**

- 5.1. Սույն ապահովագրության շրջանակներում ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովագրված անձի գույքային շահերը՝ կապված **Փոխադրում «ՄԵԿՆՈՒՄ» կամ Փոխադրում «ՄԵԿՆՈՒՄ ԵՎ ԺԱՄԱՆՈՒՄ»** ընթացքում Ապահովագրված անձի կյանքին կամ առողջությանը հասցված վնասի հետ։

**6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ (ՌԻՍԿԵՐ)**

- 6.1. Սույն Ենթաբաժնի մասով ապահովագրական պատահար են համարվում **Փոխադրում «ՄԵԿՆՈՒՄ» կամ Փոխադրում «ԺԱՄԱՆՈՒՄ»** ժամանակահատվածներում Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով՝
  - 6.1.1. Ապահովագրված անձի ստացած մարմնական վնասվածները, կոտրվածքները,
  - 6.1.2. Ապահովագրված անձի աշխատունակության մշտական կորուստը,
  - 6.1.3. Ապահովագրված անձի մահը։

**7. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 7.1. Ապահովագրողն Ապահովագրական հատուցում չի իրականացնում այն պատահարների համար, որոնք հետևանք են՝
  - 7.1.1. Ապահովագրված անձի ցանկացած հիվանդություն (վարակ), վիճակ կամ դրանց բարդությունները, բացառությամբ, եթե դրանք հետևանք են Դժբախտ պատահարի.
  - 7.1.2. Ապահովագրված անձի կողմից ակտիվ, թմրադեղերի, հոգեմետ և այլ տոքսիկ նյութերի օգտագործման (անկախ օգտագործման քանակից), եթե վերջինս ուղղակի կապված է պատահարի առաջացման հետ.
  - 7.1.3. Դժբախտ պատահարի հետևանքով առողջական խնդիրները չբուժելու, բժշկի խորհրդին չհետևելու կամ ոչ ամբողջությամբ հետևելու, ինչպես նաև առաջացած առողջական խնդիրների



բուժումից հրաժարվելու կամ բուժումն ուշացնելու պատճառով առաջացած առողջական խնդիրների բարդացման, ինչպես նաև դրա հետևանքով նոր վնասվածքների առաջացման.

7.1.4. Տարբեր տեսակի փորձարկումների ժամանակ առաջացած առողջական խնդիրների, մարմնական վնասվածքների կամ մահվան.

7.1.5. Ապահովագրված անձի առողջության վատթարացման, գիտակցության կամ մտավոր խանգարումների հետևանքով առաջացած Դժբախտ պատահարի.

7.1.6. Ապահովագրված անձի կողմից քաղաքացիական հուզումների, պատերազմների, գորաշարժերի կամ ռազմական այլ գործողությունների, ահաբեկչական գործողությունների, զանգվածային ակցիաների, գործադուլների անմիջական մասնակցության.

7.1.7. Միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակի ազդեցության.

7.1.8. Ապահովադրի, Ապահովագրված անձի կամ Շահառուի կողմից կանխամտածված և (կամ) հակաիրավական (հանցավոր) գործողությունների կատարման կամ մասնակցության, որոնք ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ են Ապահովագրական պատահարի հետ.

7.1.9. Ապահովագրված անձի կողմից ինքնասպանության (ինքնասպանության փորձի) կամ կանխամտածված անդամախեղության կամ Ապահովագրված անձի անմեղսագիտակ վիճակի, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովագրված անձը հասցվել է այդպիսի իրավիճակի այլ անձի կողմից.

7.1.10. Ապահովագրված անձի կողմից իրեն վտանգի ենթարկելու (բացառությամբ՝ ուրիշի կյանքը փրկելու).

7.1.11. Հղիության կամ ծննդաբերության.

7.1.12. Վեներական հիվանդության կամ ձեռքբերվի իմունային անվաբարարության համախտանիշի (ՁԻԱՀ), ՁԻԱՀ-ի համակցված համալիրի (ՉՀՀ) կամ մարդու իմունային անբավարարության վարակի (ՄԻԱՎ)՝ անկախ ձեռքբերման ճանապարհներից.

7.1.13. Ինսուլտի, էպիլեպսիկ նոպաների կամ ամբողջ մարմնի այլ ջղաձգությունների և այլ անհայտ էթիոլոգիայի ցնցումային համախտանիշի հետևանքով առաջացած պատահարների:

7.2. Ապահովագրողն ապահովագրական հատուցում չի իրականացնում նաև, եթե՝

7.2.1. Ապահովագրված անձի մոտ տեղի է ունեցել առողջության վատթարացում, որը հետևանք է բուժման կամ վիրահատական միջամտությունների.

7.2.2. Պատահարը տեղի է ունեցել Ապահովագրված անձի կողմից կերակրափողի միջոցով կոշտ նյութեր (այդ թվում՝ սնունդ) ընդունելու հետևանքով, բացառությամբ՝ հանկարծակի սուր թունավորումների.

7.2.3. Դժբախտ պատահարը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ Ապահովագրված անձը ճանապարհորդում կամ անցնում է այն երկրներով, որոնց տարածքում իրականացվում են պատերազմական (նաև քաղաքացիական) կամ այլ ռազմական գործողություններ.

7.2.4. Ապահովագրված անձը ցանկացած օդային տրանսպորտում ներգրավվել է որպես օդաչու:

**8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԺԱՄԿԵՏՆԵՐ**

8.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև կնքված փաստաթուղթ է, ըստ որի Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված կարգով Ապահովադրին (Ապահովագրված անձին) տրամադրել ապահովագրական հատուցում:

8.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի կողմից բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:

8.3. Պայմանագիրը կնքելու համար Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել.

8.3.1. Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի և դրա ներդիրների բնօրինակները կամ դրանց պատշաճ վավերացված պատճենները,

8.3.2. Ապահովագրված անձի և Շահառուի անձնագրերի բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենները,

8.3.3. Երթուղին, ուղևորության ժամկետը,

8.3.4. Այլ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման, ինչպես նաև Պայմանագրի կնքման համար:



- 8.4. Ապահովագրության պայմանագիրը կնքվում է Փոխադրում «ՄԵԿՆՈՒՄ» կամ Փոխադրում «ՄԵԿՆՈՒՄ ԵՎ ԺԱՄԱՆՈՒՄ» ժամանակահատվածների համար:
- 8.5. Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում օդանավակայանի, երկաթգծային կայարանի, ավտոկայանի տարածք Ապահովագրված անձի ժամանման պահից, որտեղից սկսվում է փոխադրումը մինչև Ապահովագրված անձի՝ այն օդանավակայանի, երկաթգծային կայարանի, ավտոկայանի, նավահանգստի տարածքից դուրս գալը, որտեղ ավարտվում է փոխադրումը:
- 8.6. Սույն Պայմանները կցվում են Վկայագրին՝ հանդիսանալով դրա անբաժանելի մասը և պարտադիր են Պայմանագրի կողմերի համար:
- 8.7. Վկայագրի և սույն Պայմանների միջև անհամապատասխանությունների դեպքում գերակա է Վկայագիրը, իսկ սույն Պայմանների և նրա թարգմանությունների տարբերությունները գերակա են նախապատվությունը տրվում է հայերեն տարբերակին:

**9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ**

- 9.1. Սույն ենթաբաժնի շրջանակներում Ապահովագրողը հատուցում է հետևյալ ծավալով՝
  - ✓ Ապահովագրված անձի ստացած մարմնական վնասվածքների, կոտրվածքների դեպքում՝ բուժման յուրաքանչյուր օրվա համար Ապահովագրական գումարի 0.4 %-ի չափով, բայց ոչ ավել, քան 90 օր,
  - ✓ Ապահովագրված անձի 1-ին խմբի հաշմանդամության ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 100 %-ի չափով,
  - ✓ Ապահովագրված անձի 2-րդ խմբի հաշմանդամության ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 75 %-ի չափով,
  - ✓ Ապահովագրված անձի 3-րդ խմբի հաշմանդամության ձեռքբերման դեպքում՝ Ապահովագրական գումարի 50 %-ի չափով,
  - ✓ Ապահովագրված անձի մահվան դեպքում՝ Ապահովագրական գումարի 100 %-ի չափով:
- 9.2. Եթե Ապահովագրական պատահարի հետևանքով տեղի ունեցած Ապահովագրված անձի աշխատունակության մշտական կամ ժամանակավոր կորստին հաջորդել է Ապահովագրված անձի մահը, ապա վերջինիս համար իրականացվող հատուցման չափից նվազեցվում են տվյալ Ապահովագրական պատահարի համար արդեն իսկ իրականացված ապահովագրական հատուցումները:
- 9.3. Վճարվող ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել տվյալ պահին գործող Ապահովագրական գումարի չափը:

**10. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

- 10.1. Պայմանների սույն ենթաբաժնի 6.1. կետում նշված Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը, Ապահովագրված անձը կամ Շահառուն պարտավոր է.
  - 10.1.1. ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՀԱՅՏՆԵԼ Ապահովագրողին դրա մասին Պայմանագրում նշված հեռախոսահամարով, իսկ պատահարը տեղի ունենալուց հետո ՈԶ ՈՒՇ, ՔԱՆ 10 (ՏԱՍԸ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ընթացքում (տարանցիկ ուղևորության ժամանակ տեղի ունեցած պատահարի դեպքում՝ ՀՀ, ԼՂՀ վերադառնալուց հետո ՈԶ ՈՒՇ, ՔԱՆ 10 (ՏԱՍԸ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ընթացքում) այդ մասին գրավոր՝ ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում ներկայացնելով, տեղեկացնել Ապահովագրողին, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
  - 10.1.2. Դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձի մահվան դեպքում՝ Ապահովագրված անձի մահվանից հետո 30 (ԵՐԵՍՈՒՆ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ընթացքում այդ մասին տեղեկացնել Ապահովագրողին:
  - 10.1.3. Սույն ենթաբաժնի 10.1.1 և 10.1.2 ենթակետերով նախատեսված պարտականությունները չկատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցում, եթե չապացուցվի, որ նա ժամանակին իմացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա: Սահմանված ժամկետում Ապահովագրողին գրավոր չտեղեկացնելու



դեպքում ապահովագրողն իրավունք ունի չվճարել ապահովագրական հատուցում, բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ապացուցում է տեղեկացնելու անհնարինությունը: Նշված ժամկետը հաշվարկվում է այն օրվանից, երբ Ապահովադիրն, Ապահովագրված անձին կամ Շահառուին հայտնի է դարձել պատահարի հետևանքների վրա հասնելու մասին:

10.1.4. Ապահովագրական պատահարի մասին ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՍ) ՀԱՅՏՆԵԼ համապատասխան իրավասու մարմնին և ստանալ պատահարը տեղի ունենալու փաստը հավաստող և հանգամանքները նկարագրող փաստաթղթեր, բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովագրողն Ապահովադիրն (Ապահովագրված անձին, Շահառուին) ազատել է սույն ենթակետում նշված պարտականությունները կատարելուց:

10.1.5. Հնարավորության սահմաններում իրականացնել գործողություններ՝ պատահարի մասնակից այլ կողմերի և վկաների (առկայության դեպքում) ինքնությունը (անուն, ազգանուն, հասցե, հեռախոսահամար և այլն) պարզելու նպատակով:

10.1.6. Ապահովագրական պատահարի հետ կապված գործընթացներում այլ կողմերի հետ հարաբերություններում ապահովել իր իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը:

10.1.7. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ✓ Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից գրավոր դիմում՝ հատուցում ստանալու վերաբերյալ,
- ✓ Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի պահանջով),
- ✓ Ապահովագրված անձի և Շահառուի անձնագրերը,
- ✓ Ապահովագրված անձի օրգանիզմում ալկոհոլի, թմրադեղերի և հոգեմետ այլ նյութերի առկայության մասին փաստաթուղթ՝ հաստատված իրավասու մարմնի կողմից (Ապահովագրողի պահանջով),
- ✓ Դժբախտ պատահարում մեղավոր կողմի առկայության դեպքում՝ մեղավորի վերաբերյալ տվյալներ,
- ✓ Իրավասու մարմնի կողմից Դժբախտ պատահարի արձանագրությունը,
- ✓ Ապահովագրողի հիմնավոր պահանջով՝ տվյալ պատահարին առնչվող այլ փաստաթղթեր:

10.1.8. Դժբախտ պատահարի հետևանքով **Ապահովագրված անձի հաշմանդամության խումբ/կարգավիճակ ստանալու դեպքում** 10.1.7 կետում նշված փաստաթղթերից բացի ներկայացվում է նաև՝

- ✓ Բժշկասոցիալական փորձաքննական մարմինների (ԲՄՖ) կամ սոցիալական ապահովության տարածքային բաժնի կողմից Ապահովագրված անձին հաշմանդամ ճանաչելու վերաբերյալ որոշումը:

10.1.9. Դժբախտ պատահարի հետևանքով **Ապահովագրված անձի մահվան դեպքում** 10.1.7 կետում նշված փաստաթղթերից բացի ներկայացվում են նաև՝

- ✓ Ապահովագրված անձի մահվան վկայականի բնօրինակը կամ նոտարական գրասենյակի կողմից հաստատված պատճենը,
- ✓ Ապահովագրված անձի մահվան պատճառների վերաբերյալ բժշկական տեղեկանքը/վկայականը (Ապահովագրողի պահանջով),
- ✓ Նոտարի կողմից հաստատված ժառանգության իրավունքը հաստատող փաստաթուղթ, բացառությամբ, եթե Պայմանագրում նշված Շահառուն է ներկայացնում հատուցում ստանալու համար փաստաթղթերը:

10.1.10. Դժբախտ պատահարի արդյունքում **Ապահովագրված անձի ստացած մարմնական վնասվածքների, կոտրվածքների դեպքում** 10.1.7 կետում նշված փաստաթղթերից բացի ներկայացվում են նաև՝

- ✓ Ամբուլատոր սպասարկման դեպքում՝ բժշկական տեղեկանք և(կամ) խորհրդատվական թերթիկ և(կամ) քաղվածք ամբուլատոր քարտից,
- ✓ Ստացիոնար բժշկական օգնության դեպքում՝ ստացիոնար քարտից քաղվածքի (էպիկրիզի) բնօրինակը,



- ✓ Փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթեր՝ վճարման հաշվի (հաշիվ-ապրանքագրի) բնօրինակը և հետևյալ փաստաթղթերից որեւէ մեկի բնօրինակը՝ դրամարկղային ֆինկալային կտրոն կամ դրամարկղի մուտքի օրդեր (կանխիկ վճարման դեպքում) կամ բանկային փոխանցման անդորրագիր:
- 10.1.11. Ապահովագրական հատուցման վճարումը կարող է հետաձգվել, եթե Ապահովագրված անձի նկատմամբ հարուցվել է քրեական գործ՝ կապված Ապահովագրական պատահարի առաջացման հետ:
- 10.1.12. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև այնպիսի փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են վնասի պատճառների և (կամ) չափի հիմնավորման համար:
- 10.1.13. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ Է ապահովագրական հատուցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ գրավոր դիմումի) ներկայացնել Ապահովագրական պատահարի վերաբերյալ Ապահովագրողին ԳՐԱՎՈՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ՀԵՏՈ 3 (ԵՐԵՔ) ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:
- 10.1.14. Սահմանված ժամկետում Ապահովադիր (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից Պայմաններով անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն 10.1.13 կետով սահմանված 3 (երեք) ամիս ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Պայմանների համաձայն Ապահովադիրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 10.1.15. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) կրում է իր կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի (ներառյալ՝ պատճենների) իսկության, հավաստիության և ոչ կեղծ լինելու բոլոր իրավական հետևանքների ռիսկերը:
- 10.1.16. Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև 3 (երեք) ամիս ժամկետով կամ մինչև Ապահովագրված անձի երկարատև բուժման ավարտը: Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադիրի կողմից ներկայացված փաստաթղթերը ստանալուց հետո ոչ ավել քան 2 (երկու) ամիս ժամկետով կասեցնել դիմումի ընթացքը և դիմել անկախ փորձագետի՝ Ապահովադիրի կողմից ներկայացված փաստաթղթերի (ներառյալ բժշկական փաստաթղթերի, հաշմանդամության կարգի նշանակման որոշումների) արժանահավատությունը, իսկությունը կամ վավերականությունը ստուգելու համար:
- 10.1.17. Ապահովադիր (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո Ապահովագրողը առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում կազմում է պատճառաբանված որոշում ապահովագրական հատուցում իրականացնելու կամ այն մերժելու վերաբերյալ, իսկ որոշում կազմելուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում այն առձեռն, էլեկտրոնային տարբերակով կամ փոստային ծառայության միջոցով տրամադրում է Ապահովադիրին, Ապահովագրված անձին, Շահառուին:
- 10.1.18. Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը միանվագ վճարում է ապահովագրական հատուցումը:
- 10.1.19. Եթե Ապահովագրության պայմանագրով նախատեսվում է ապահովագրական հատուցման վճարում մի քանի Շահառուների, ապա ապահովագրական հատուցումը նրանց վճարվում է Պայմանագրով նախատեսված մասնաբաժիններով: Եթե Պայմանագրով ապահովագրական հատուցման՝ Շահառուներից յուրաքանչյուրին վճարման ենթակա մասնաբաժինների չափը սահմանված չէ, ապա ապահովագրական հատուցումը Շահառուներին վճարվում է հավասար մասնաբաժիններով:





- 10.1.20. Շահառուի մահվան դեպքում ապահովագրական հատուցում ստանալու իրավունքն անցնում է Շահառուի՝ օրենքով ճանաչված ժառանգներին:
- 10.1.21. Ապահովագրողի կողմից Ապահովագրական հատուցման վճարումն իրականացվում է Ապահովագրված անձի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:
- 10.1.22. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) պատահարի հետ կապված յուրաքանչյուր նամակի, պահանջի, հայցի, դատաքննության, հետաքննության կամ ցանկացած գործընթացի վերաբերյալ տեղեկությունները կամ փաստաթղթերը պետք է անմիջապես ներկայացնի Ապահովագրողին:
- 10.1.23. Դժբախտ պատահարի և (կամ) դրա առաջացրած հետևանքների միջև պատճառահետևանքային կապը պարզելու, ինչպես նաև ապահովագրական հատուցման չափը որոշելու նպատակով Ապահովագրողը կարող է իր հաշվին նշանակել Ապահովագրված անձի բժշկական քննություն և (կամ) զննում, իսկ Ապահովագրված անձը ՊԱՐՏԱՎՈՐ Է տվյալ քննությունն անցնել Ապահովագրողի կողմից ընտրված բժշկական հաստատությունում, որից Ապահովագրված անձի հրաժարվելու դեպքում Ապահովագրողն ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՄԵՐԺԵԼՈՒ ապահովագրական հատուցումը:
- 10.1.24. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը կամ հետ պահանջել այն, եթե քննության արդյունքում պարզվի, որ Պայմանագիրը կնքելու պահին և (կամ) Պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրի կողմից Ապահովագրողին հայտնվել են ապահովագրական ռիսկին առնչվող կեղծ տեղեկություններ կամ այդ տեղեկությունները թաքցվել են:
- 10.1.25. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցումը, եթե պայմանների 10.1.23 կետի համաձայն դիմել է անկախ փորձագետի և վերջինիս կարծիքով Ապահովադիրի կողմից ներկայացված բժշկական փաստաթղթերում զետեղված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը, կեղծ կամ թերի է (ներառյալ՝ սխալ կամ ոչ ճիշտ հաշմանդամության կարգի սահմանումը):
- 10.2. Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովագրողը պարտավոր է՝
  - 10.2.1. Ապահովադիրի (Ապահովագրված անձի, Շահառուի) պահանջով տրամադրել խորհրդատվություն հետագա իրականացվելիք գործողությունների վերաբերյալ,
  - 10.2.2. Ապահովադիրից (Ապահովագրված անձից, Շահառուից) ապահովագրական հատուցման դիմում ստանալուց հետո վերջինիս տեղեկացնել բացակայող, բայց ապահովագրական հատուցման համար անհրաժեշտ փաստաթղթերի մասին,
  - 10.2.3. Իրականացնել ապահովագրական հատուցում սահմանված կարգով և ժամկետում:

**ԵՆԹԱԲԱԺԻՆ Բ. ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԶԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ**

**5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ**

5.1. Ապահովագրության օբյեկտը Ապահովադիրի (Ապահովագրված անձի) գույքային շահերն են՝ կապված **պլանավորված ուղևորության/փոխադրումների կատարման անկարողության հետևանքով առաջացած չնախատեսված ծախսերի ռիսկի հետ:**

**6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ (ՌԻՄԿԵՐ)**

6.1. Սույն Ենթաբաժնի մասով **ապահովագրական պատահար են համարվում** ապահովագրության ժամկետում Ապահովագրված անձի կամ նրա հետ համատեղ ուղևորություն կատարող մեկ այլ Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած հետևյալ իրադարձությունները, որոնց հետևանքով անհնար է լինում իրականացնել ուղևորությունը.

- 6.1.1. «Դժբախտ պատահար»՝ Դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձի ստացած վնասվածք, որի արդյունքում ուղևորության իրականացումը հակացուցված է՝ համաձայն բժշկական եզրակացության:
- 6.1.2. «Հոսպիտալացում»՝ դժբախտ պատահարի կամ սուր հիվանդության պատճառով Ապահովագրված անձի կամ նրա ընտանիքի անդամի հոսպիտալացում, որը պահանջում է



բժշկական հաստատությունում շարունակական ստացիոնար բուժում մինչև ուղևորության մեկնարկի օրը ներառյալ:

Այս իրադարձությունը չի ճանաչվում որպես ապահովագրական դեպք, եթե սույն կետում նշված անձինք հոսպիտալացումից հրաժարվել են:

- 6.1.3. «**Ինֆեկցիոն հիվանդություններ**»՝ կարմրուկ, կարմրախտ, ջրծաղիկ, տենդ, դիֆտերիա, խոզուկ, Էպիդեմիկ պարոտիտ, քութեշ:
- 6.1.4. «**Դատական գործընթաց**»՝ Դատական գործընթաց, որում Ապահովագրված անձը ներգրավվել է, ապահովագրության պայմանագրի ձեռքբերումից և ապահովագրվճարը վճարելուց հետո ընդունված դատական ակտի համաձայն, բացառությամբ այն դեպքերի, երբ ապահովագրված անձը դատական գործընթացում ներգրավված է որպես երդվյալ ատենակալ, կողմերից որևէ մեկի ներկայացուցիչ կամ կատարում է իր մասնագիտական պարտականությունները:
- 6.1.5. «**Զորակոչ**»՝ ապահովագրության պայմանագրով ապահովագրվճարի վճարումից հետո Ապահովագրված անձին հաստատված ծանուցագրով հրատապ զինվորական ծառայության կամ ռազմական վերապատրաստման կանչելը:
- 6.1.6. «**Գույքի վնաս**»՝ Ապահովագրված անձին պատկանող անշարժ գույքի վնասվելը կամ ոչնչացումը, որն առաջացել է հետևյալի արդյունքում՝
  - ✓ Հրդեհ,
  - ✓ Ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու եվ համանման այլ համակարգերի ջրից պատճառած վնաս,
  - ✓ Բնական աղետներ (երկրաշարժ, սողանք, փոթորիկ, ջրհեղեղ, կարկուտ կամ սելավ),
  - ✓ Երրորդ անձանց անօրինական գործողություններ:
- 6.1.7. «**Վթաք**»՝ այն տրանսպորտային միջոցի վնասը, որով Ապահովագրված անձը մեկնում է օդանավակայան, որի հետևանքների վերացումը տևում է ավելի քան 3 ժամ և պահանջում է Ապահովագրված անձի ներկայությունը:
- 6.1.8. «**ՃՏՊ**»՝ Ապահովագրված անձի՝ որպես վարորդի կամ ուղևորի ներգրավվածությամբ ճանապարհատրանսպորտային պատահար, որը տեղի է ունեցել նախատեսված թոփչքի ժամից ոչ շուտ, քան 12 ժամ առաջ:
- 6.1.9. «**Բնական աղետ**»՝ բնական աղետ կամ վտանգավոր բնական երևույթ, որը տեղի է ունեցել ՀՀ տարածքում կամ այն երկրում, որտեղ նախատեսված է ուղևորությունը (ջրհեղեղ, երկրաշարժ, փոթորիկ, ցունամի և այլ բնական աղետներ կամ վտանգավոր բնական երևույթներ):
- 6.1.10. «**Արտակարգ դրություն**»՝ ապահովագրության պայմանագրի կնքման օրվանից հետո նախատեսվող ուղևորության երկրում արտակարգ դրության հայտարարում:

6.2. Սույն Ենթաբաժնի մասով՝ համատեղ ուղևորություն կատարող անձինք այն անձինք են, ում ուղևորության երթուղին, ժամկետը և օդային տրանսպորտի թոփչքի համարները համընկնում են: Ինչպես նաև համընկնում են կեցավայրի (հյուրանոց, բնակարան, տուն) անունները, կեցավայրում մնալու ժամկետները ամբողջությամբ կամ մասնակի: Միևնույն ժամանակ, եթե կեցավայրերը (հյուրանոց, բնակարան, տուն) չեն համընկնում անունով, պետք է տեղակայված լինեն միևնույն թաղամասում:

**7. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 7.1. Ապահովագրողն ապահովագրական հատուցում չի իրականացնում այն պատահարների համար, որոնք հետևանք են Ապահովագրված անձի (կամ այլ անձի, ում հետ կատարվածը խոչընդոտում է ուղևորությանը)՝
  - 7.1.1. ինքնասպանության կամ մարմնական վնաս պատճառող մտադրության.
  - 7.1.2. խրոնիկական հիվանդությունների սրացման, հոգեկան խանգարումների, հոգեկան հիվանդության,
  - 7.1.3. հղիության վիճակը, բացառությամբ տասներկու շաբաթների ժամանակահատվածի հանկարծակի բարդությունների դեպքերի,
  - 7.1.4. պլանային հոսպիտալիզացում:
- 7.2. Սույն Ենթաբաժնի մասով ապահովագրական չեն համարվում այն պատահարները, որոնք հետևանք են՝



- 7.2.1. Ապահովագրված անձի անօրինական գործողությունների,
- 7.2.2. Ապահովագրված անձի դիտավորությամբ կատարված գործողությունների,
- 7.2.3. Ապահովագրված անձի՝ ակտիվ, թմրամիջոցի կամ թունավորման ազդեցության տակ գտնվելու, ինչպես նաև Ապահովագրված անձի կողմից տրանսպորտային միջոցը ակտիվ կամ թմրամիջոցի ազդեցության տակ և/կամ առանց վարորդական իրավունքի վարելու:
- 7.3. Ապահովագրական պատահար չի հանդիսանում.
  - 7.3.1. ՀՀ տարածքից մեկնելիս հարկային սահմանափակումների հետ կապված Ապահովագրված անձին սահմանապահ ծառայության կողմից մերժումը, այդ թվում՝ Ապահովագրված անձի կողմից պարտավորությունների չկատարման հետ (ալիմենտների չվճարում և այլն),
  - 7.3.2. Սույն Ենթաբաժնի 6.1. կետում ուղղակիորեն չնշված դեպքերը:

**8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԺԱՄԿԵՏՆԵՐ**

- 8.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև կնքված փաստաթուղթ է, ըստ որի Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված կարգով Ապահովադրին (Ապահովագրված անձին) տրամադրել ապահովագրական հատուցում:
- 8.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի կողմից բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:
- 8.3. Ապահովագրության պայմանագիրն ուժի մեջ է մտնում Փոխադրման/մեկնման օրվան նախորդող 15-րդ օրվա ժամը 00:00-ին, սակայն ոչ շուտ, քան սույն Պայմանների 4.2. կետի համաձայն ապահովագրավճարի վճարման պահին և գործում է մինչև սահմանված Փոխադրման/մեկնման սկիզբը: Պայմանագրի գործողության ժամկետը երկարում է փոխադրման իրականացման համար անհրաժեշտ ժամանակահատվածով, այն դեպքում երբ չվերթը հետաձգվել է կամ փոխադրումը չի իրականացվել սահմանված ժամանակահատվածում:
- 8.4. Պայմանագիրը կնքելու համար Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել.
  - 8.4.1. Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի և դրա ներդիրների բնօրինակները կամ դրանց պատշաճ վավերացված պատճենները,
  - 8.4.2. Ապահովագրված անձի և Շահառուի անձնագրերի բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենները,
  - 8.4.3. Երթուղին, ուղևորության ժամկետը,
  - 8.4.4. Այլ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման, ինչպես նաև Պայմանագրի կնքման համար:

**9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ**

- 9.1. Սույն Ենթաբաժնի շրջանակներում Ապահովագրողը հատուցում է սույն Ենթաբաժնի 6.1. կետում նշված իրադարձությունների տեղի ունենալու հետևանքով Ապահովագրված անձի ուղևորության ընդհատման հետ կապված հետևյալ ծախսերը.
  - 9.1.1. Ապահովագրված անձի կողմից ուղևորության տոմսերի չեղարկման (վերադարձման) դեպքում Ապահովագրված անձի կողմից վճարված գումարի (դրանց արժեքի) և Փոխադրողի կողմից հետ վերադարձված գումարի տարբերության չափով:  
Եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել Փոխադրումն սկսելուց հետո, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է համամասնորեն՝ փոխադրումների չիրականացված հատվածների քանակի և բոլոր փոխադրումների քանակի հարաբերակցության չափով:
  - 9.1.2. Ապահովագրված անձի կողմից ուղևորության սկզբնական տոմսերը վերաձևակերպելու կամ նույն երթուղու կամ դրա մի հատվածի համար այլ ամսաթիվով և/կամ այլ ժամի համար փոխադրման դասի պահպանմամբ կամ ավելի ցածր դասի նոր տոմսեր ձեռքբերելու համար կատարված ծախսերը:



9.1.3. Ապահովագրված անձի կողմից կատարված ծախսերը, որոնք ամրագրված հյուրանոցային համարից հրաժարվելու դեպքում ենթակա չեն վերադարձման կամ ենթական են մասնակի վերադարձման՝ հետ վերադարձված գումարի տարբերության չափով:

**10. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՁԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅ**

10.1. Սույն Ենթաբաժնի 6.1. կետում նշված Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը, Ապահովագրված անձը կամ Շահառուն պարտավոր է.

10.1.1. ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ԶՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՀԱՅՏՆԵԼ դրա մասին Ապահովագրողին Պայմանագրում նշված հեռախոսահամարով, իսկ պատահարը տեղի ունենալուց հետո ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 10 (ՏԱՍԸ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ (ՏԱՐԱՆՅԻԿ ՓՈՒՄԱԴՐՄԱՆ Ժամանակ տեղի ունեցած պատահարի դեպքում` ՀՀ, ԼՂՀ վերադառնալուց հետո ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 10 (ՏԱՍԸ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ) ընթացքում այդ մասին գրավոր` ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում ներկայացնելով, տեղեկացնել Ապահովագրողին, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

10.1.2. Սույն Ենթաբաժնի 10.1.1 ենթակետով նախատեսված պարտականությունները չկատարելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի չվճարելու ապահովագրական հատուցում, եթե չապացուցվի, որ նա ժամանակին իմացել է Ապահովագրական պատահարի վրա հասնելու մասին կամ, որ այդ մասին Ապահովագրողի մոտ տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա: Սահմանված ժամկետում Ապահովագրողին գրավոր չտեղեկացնելու դեպքում ապահովագրողն իրավունք ունի չվճարել ապահովագրական հատուցում, բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ապացուցում է տեղեկացնելու անհնարիությունը: Նշված ժամկետը հաշվարկվում է այն օրվանից, երբ Ապահովադիրին, Ապահովագրված անձին կամ Շահառուին հայտնի է դարձել պատահարի հետևանքների վրա հասնելու մասին:

10.1.3. 6.1.1., 6.1.6., 6.1.7. և 6.1.8. կետերով սահմանված ապահովագրական պատահարի մասին ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ԶՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՀԱՅՏՆԵԼ համապատասխան իրավասու մարմնին և ստանալ պատահարը տեղի ունենալու փաստը հավաստող և հանգամանքները նկարագրող փաստաթղթեր, բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովագրողն Ապահովադիրին (Ապահովագրված անձին, Շահառուին) ազատել է սույն ենթակետում նշված պարտականությունները կատարելուց:

10.1.4. Ապահովագրական պատահարի հետ կապված գործընթացներում այլ կողմերի հետ հարաբերություններում ապահովել իր իրավունքների և շահերի պատշաճ պաշտպանությունը:

10.1.5. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը`

- ✓ Ապահովադիրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից գրավոր դիմում` հատուցում ստանալու վերաբերյալ,
- ✓ Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի պահանջով),
- ✓ Ապահովագրված անձի և Շահառուի անձնագրերը,
- ✓ Տոմսերի չեղարկումը կամ վերաձևակերպումը, ինչպես նաև հյուրանոցային համարի ամրագրումը չեղարկելը կամ փոփոխելը հավաստող փաստաթղթերը,
- ✓ Ապահովագրված անձի կողմից կատարված ծախսերի բովանդակությունը և մեծությունը հաստատող փաստաթղթեր` դրամական միջոցների հետվերադարձի ակտեր, կտրոններ և դեպքն ապահովագրական ճանաչելու և/կամ ծախսերի չափը որոշելու համար այլ փաստաթղթեր:

10.1.6. Սույն բաժնի 6.1.1., 6.1.2. և 6.1.3. կետերով նախատեսված ռիսկերի ի հայտ գալու դեպքում այն փաստաթղթերը, որոնք ապահովագրական պատահարի ի հայտ գալու պատճառ են հանդիսացել.

- ✓ Հիվանդության կամ վնասվածքի վերաբերյալ տեղեկանք,



- ✓ Հիվանդության պատմագիր,
- ✓ Բժշկի եզրակացություն,
- ✓ Ապահովագրողի պահանջով հիվանդաթերթիկ կամ ժամանակավոր անաշխատունակության թերթիկ, հիվանդության պատմագիր և բուժող բժշկի կողմից վերջին 12 ամիսների վերաբերյալ տրված բժշկական եզրակացություն, ինչպես նաև հիվանդության բնույթը և բարդությունը հավաստող փաստաթղթեր:

- 10.1.7. Սույն բաժնի 6.1.4. կետով նախատեսված պատահարի ի հայտ գալու դեպքում դատական ծանուցագիրը:
- 10.1.8. Սույն բաժնի 6.1.5. կետով նախատեսված պատահարի ի հայտ գալու դեպքում զինվորական տեղամասից ստացված ծանուցագիրը:
- 10.1.9. Սույն բաժնի 6.1.6.-6.1.8. կետերով նախատեսված պատահարների ի հայտ գալու դեպքում համապատասխան իրավասու պետական մարմինների կողմից տրված փաստաթուղթ, որը հավաստում է իրադարձության տեղի ունենալու փաստը և դրա հետևանքով կրած վնասները:
- 10.1.10. Սույն բաժնի 6.1.9. կետով նախատեսված պատահարի ի հայտ գալու դեպքում համապատասխան իրավասու պետական մարմնի կողմից տրված բնական աղետ տեղի ունենալու փաստը հավաստող փաստաթղթեր:
- 10.1.11. Սույն բաժնի 6.1.10. կետով նախատեսված պատահարի ի հայտ գալու դեպքում համապատասխան իրավասու պետական մարմնի կողմից տրված արտակարգ դրություն հայտարարելու վերաբերյալ փաստը հավաստող փաստաթղթեր:
- 10.1.12. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև այնպիսի փաստաթղթեր և տեղեկատվություն, որոնք ուղղակի կապ ունեն տեղի ունեցած պատահարի հետ կամ կարևոր են վնասի պատճառների և (կամ) չափի հիմնավորման համար:
- 10.1.13. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ Է ապահովագրական հատուցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ՝ գրավոր դիմումի) ներկայացնել Ապահովագրական պատահարի վերաբերյալ Ապահովագրողին ԳՐԱՎՈՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ՀԵՏՈ 3 (ԵՐԵՔ) ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:
- 10.1.14. Սահմանված ժամկետում Ապահովադիր (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից Պայմաններով անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ գրավոր որևէ միջնորդություն 10.1.13 կետով սահմանված 3 (երեք) ամիս ժամկետը երկարաձգելու մասին չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Պայմանների համաձայն Ապահովադիր կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 10.1.15. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) կրում է իր կողմից Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերի (ներառյալ՝ պատճենների) իսկության, հավաստիության և ոչ կեղծ լինելու բոլոր իրավական հետևանքների ռիսկերը:
- 10.1.16. Ապահովագրողը, Ապահովադիր (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 10 (ՏԱՍԸ) աշխատանքային օրվա ընթացքում կազմում է պատճառաբանված որոշում ապահովագրական հատուցում իրականացնելու կամ այն մերժելու վերաբերյալ, իսկ որոշում կազմելուց հետո դա առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում առձեռն, էլեկտրոնային տարբերակով կամ փոստային ծառայության միջոցով տրամադրում է Ապահովադիրին, Ապահովագրված անձին, Շահառուին:
- 10.1.17. Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցումը:
- 10.1.18. Եթե Ապահովագրության պայմանագրով նախատեսվում է ապահովագրական հատուցման վճարում մի քանի Շահառուների, ապա ապահովագրական հատուցումը նրանց վճարվում է Պայմանագրով նախատեսված մասնաբաժիններով: Եթե Պայմանագրով ապահովագրական



հատուցման՝ Շահառուներից յուրաքանչյուրին վճարման ենթակա մասնաբաժինների չափը չի սահմանված, ապա ապահովագրական հատուցումը Շահառուներին վճարվում է հավասար մասնաբաժիններով:

- 10.1.19. Ապահովագրողի կողմից Ապահովագրական հատուցման վճարումն իրականացվում է Ապահովագրված անձի Բանկային հաշվին փոխանցելու միջոցով:
- 10.1.20. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) պատահարի հետ կապված յուրաքանչյուր նամակի, պահանջի, հայցի, դատաքննության, հետաքննության կամ ցանկացած գործընթացի վերաբերյալ տեղեկությունները կամ փաստաթղթերը պետք է անմիջապես ներկայացնի Ապահովագրողին:

**ԵՆԹԱԲՍԺԻՆ Գ. ՌԻԴԵԲԵՈՒ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ**

- 5.1. Ապահովագրության օբյեկտը ապահովագրված անձի (Ապահովադիր, Շահառու) գույքային շահերն են՝ կապված սահմանված կարգով Փոխադրողին հանձնված ուղեբեռի կորստի կամ վնասման հետ:

**6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ (ՌԻՍԿԵՐ)**

- 6.1. Համաձայն Պայմանների սույն Ենթաբաժնի՝ ապահովագրական պատահար են համարվում ապահովագրության ժամկետում և ապահովագրության տարածքում ուղեբեռի **կորուստը, ոչնչացումը կամ վնասումը**, որը հաստատված է համապատասխան փաստաթղթերով:
- 6.2. Ուղեբեռը համարվում է **կորած** (ուղեբեռի չհասնելը ժամանման վայր) բացառապես Փոխադրողի կողմից դրա կորուստը գրավոր հաստատելու դեպքում:
- 6.3. Ուղեբեռը համարվում է **ոչնչացած**, եթե դրա վերանորոգման ծախսերը մնացորդային արժեքի հետ միասին գերազանցում են ուղեբեռի փաստացի արժեքը: Ապահովագրողն իրավունք ունի ուղեբեռը ճանաչել ոչնչացված իր մոտ առկա փաստաթղթերի և տեղեկատվության հիման վրա: Ապահովագրողի կողմից ուղեբեռը ոչնչացած համարվելու դեպքում Ապահովագրողն իրավունք ունի Ապահովագրված անձից (Ապահովադիր, Շահառու) պահանջել ուղեբեռի պիտանի մնացորդները կամ ապահովագրական հատուցման գումարը նվազեցնել այդ մնացորդների արժեքի չափով:
- 6.4. **Վնասված** են համարվում ուղեբեռի այն իրերը (առարկաները), որոնց կառուցվածքային ամբողջականությունը խախտված է:

**7. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 7.1. Համաձայն Պայմանների սույն Ենթաբաժնի՝ ապահովագրական պատահար չեն համարվում և Ապահովագրողի կողմից ենթակա չեն հատուցման այն դեպքերը, որոնք հետևանք են.
  - 7.1.1. Բեռի պարունակության բնական հատկանիշների, ջերմաստիճանի կամ խոնավության ազդեցության, որը կարող է հանգեցնել դրա ոչնչացման կամ վնասման (չորացում, արտահոսք, քաշի ավելացում խոնավությունից, թրջվելուց, փտում, քայքայում, բորբոս, ինքնայրում, հրդեհավտանգ, պայթյունավտանգ),
  - 7.1.2. Ապահովագրված գույքի մաշվածության, ժանգոտման, բորբոսի, գունաթափման և այլ բնական փոփոխությունների,
  - 7.1.3. Քերծվածքների, ներկի ճաքերի և արտաքին տեսքի այլ վնասների, որոնք չեն հանգեցնում դրա ֆունկցիոնալ խախտման,
  - 7.1.4. Միջատների և կրծողների կողմից գույքի վնասման, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով,
  - 7.1.5. Սննդամթերքի, ներկերի, ներկանյութերի, քիմիական նյութերի փոխադրման կամ փոխադրման ընթացքում դրանց արտահոսքի,
  - 7.1.6. Ապահովագրված ուղեբեռում մարտկոցների պայթյունի կամ նստեցման (протечки),
  - 7.1.7. Ապահովագրված ուղեբեռում կտրող-ծակող գործիքների փոխադրման, այդ թվում՝ այնպիսի ապրանքների, որոնք ունեն սուր կտրող եզրեր (ապակու կամ կերամիկայի կտորներ, դանակ, կենցաղային գործիքների և այլն),



- 7.1.8. Ապահովագրված անձի (Ապահովադիր, Շահառու) կողմից ուղերեւոյ փոխադրման կանոնների խախտման կամ Փոխադրողի կողմից սահմանված ուղերեւոյ փոխադրումը արգելված լինելու դեպքի:
- 7.2. Սույն Ենթաբաժնի իմաստով ապահովագրական չեն հանդիսանում այն պատահարները, որոնք հետևանք են.
  - 7.2.1. Ապահովագրված անձի (Ապահովադիր, Շահառու) կամ այլ շահագրգիռ անձի կողմից կատարված հակաօրինական գործողությունների,
  - 7.2.2. Ապահովագրված անձի (Ապահովադիր, Շահառու) կամ այլ շահագրգիռ անձի կողմից կատարված կանխամտածված չարամիտ գործողությունների:
- 7.3. Ապահովագրական պատահար չի հանդիսանում.
  - 7.3.1. Ուղերեւոյ կեղտոտվելը կամ խոնավացումը, որը չի հանգեցնում դրա գործառնության կորստի,
  - 7.3.2. Ուղերեւոյ առանձին տարրերի կորուստ, որը ի հայտ է եկել Փոխադրողին հանձնված ամբողջական Ուղերեւոյի և նրանից ստացված ամբողջական Ուղերեւոյի քաշերի տարբերության հայտնաբերման արդյունքում,
  - 7.3.3. Այն դեպքը, երբ Ապահովագրված անձը (Ապահովադիր, Շահառու) Փոխադրողից չի ստացել ուղերեւոյի հետ տեղի ունեցած պատահարի վերաբերյալ փաստաթղթային հիմնավորում,
  - 7.3.4. Ուղերեւոյի ստացման հետ կապված օժանդակ ծախսերի (մաքսատուրք, տուգանք, տույժ) առաջացումը, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով:
- 7.4. Սույն Ենթաբաժնում նշված ապահովագրությունը չի տարածվում և Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում Ուղերեւոյում առկա հետևյալ իրերի վրա.
  - 7.4.1. Կանխիկ փող, արժեթուղթ, բանկային քարտ,
  - 7.4.2. Հնաոճ և եզակի նմուշներ, արվեստի գործեր և հավաքածուների իրեր,
  - 7.4.3. Ճանապարհորդության փաստաթղթեր, անձնագիր և ցանկացած այլ տեսակի փաստաթղթեր, սլայդեր, լուսանկարներ, ֆիլմերի պատճեններ,
  - 7.4.4. Փոխադրման կանոնների խախտմամբ Փոխադրողին փոխանցված իրեր և/կամ այնպիսի իրեր, որոնց փոխադրումն արգելված է,
  - 7.4.5. Էլեկտրոնային կրիչների վրա առկա տեղեկատվություն,
  - 7.4.6. Ձեռագրեր, պլաններ, սխեմաներ, գծագրեր, մոդելներ, հաշվապահական և գործնական փաստաթղթեր,
  - 7.4.7. Ապակե, կերամիկական և ճենապակե իրեր,
  - 7.4.8. Չարդեր (թանկարժեք մետաղներից, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից պատրաստված ապրանքներ),
  - 7.4.9. Թղթե, սովարաթղթե, փայտե, պոլիէթիլենային և նմանատիպ փաթեթավորում,
  - 7.4.10. Կոնտակտային լինզաներ, ակնոցներ,
  - 7.4.11. Կենդանիներ, միջատներ, բույսեր, կորալներ, սպունգեր, վահանակներ և սնկեր,
  - 7.4.12. Ցանկացած հատիկավոր իրեր (շիլաներ, սերմեր, ավազ և այլն)
  - 7.4.13. Կրոնական պաշտամունքի օբյեկտներ, երաժշտական գործիքներ:
- 7.5. Ապահովագրողը Ուղերեւոյում առկա հետևյալ ապրանքների գծով հատուցման տրամադրումը չի իրականացնում դրանց իրական արժեքի չափով՝ անկախ դրանց փաստաթղթային հաստատման առկայության փաստից.
  - 7.5.1. Մորթե իրեր, ժողովրդական արվեստի և արհեստի գործեր,
  - 7.5.2. Սնունդ, հեղուկներ, ծխախոտ, ալկոհոլային խմիչքներ,
  - 7.5.3. Շարժական էլեկտրոնիկա և օպտիկա, այդ թվում՝ առուղիո, ֆոտո, վիդեո սարքավորումներ, բջջային և արբանյակային հեռախոսներ, համակարգիչներ, ռադիո ժապավեններ, ռադիոընդունիչներ և այլն, տեղեկատվության էլեկտրոնային կրիչներ, ֆոտո-տեսախցիկների օբյեկտիվներ, հեռուստասարքեր, մանրադիտակներ, հեռադիտակներ և դրանց ցանկացած պարագաներ, եթե այլ բան նախատեսված չէ ապահովագրության պայմանագրով,
  - 7.5.4. Սնուցման տարրեր (էլեկտրակուտակիչներ, մարտկոցներ և այլն),
  - 7.5.5. Ցանկացած տեսակի պրոթեզներ:
- 7.6. Ապահովագրողը հատուցում չի իրականացնում Ուղերեւոյում առկա հետևյալ ապրանքների մասով.



7.6.1. փոխադրման ընթացքում չվնասված առարկաներ, որոնք հանդիսանում են ամբողջական հավաքածուների մաս, դետալ (սպասքեղենի հավաքածուներ, սեղանի խաղեր և այլն), այդ թվում՝ տեղափոխման նպատակով ամբողջական մասերի մասնատված ցանկացած առարկաների չվնասված մասեր, դետալներ:

Սույն սահմանափակումը չի տարածվում հագուստեղենի եւ կոշիկեղենի վրա, որոնք վաճառվում են բացառապես գույգերով եւ կազմում են մի ամբողջական հավաքածու՝ անփոխարինելի համարվող աջ կամ ձախ գույգի հետ (կոշիկ, ձեռնոց, գուլպա և այլն): Նշված հավաքածուի ամբողջական վնասի դեպքում Ապահովագրողը իրավունք ունի հատուցել կամ հավաքածուի ամբողջական արժեքի չափով, կամ հատուցումն իրականացնել հավաքածուի քաշի հիման վրա՝ կախված ապահովագրության պայմանագրի պայմաններից:

**8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԺԱՄԿԵՏՆԵՐ**

8.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև կնքված փաստաթուղթ է, ըստ որի Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված կարգով Ապահովադրին (Ապահովագրված անձին) տրամադրել ապահովագրական հատուցում:

8.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի կողմից բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:

8.3. Պայմանագիրը կնքելու համար Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել.

8.3.1. ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի և դրա ներդիրների բնօրինակները կամ դրանց պատշաճ վավերացված պատճենները,

8.3.2. Ապահովագրված անձի և Շահառուի անձնագրերի բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենները,

8.3.3. Երթուղին, ուղևորության ժամկետը,

8.3.4. Այլ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման, ինչպես նաև Պայմանագրի կնքման համար:

8.4. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել **Փոխադրում «ՄԵԿՆՈՒՄ» և Փոխադրում «ԺԱՄԱՆՈՒՄ» ժամանակահատվածների համար:**

**9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ**

9.1. Պայմանների սույն Ենթաբաժնի շրջանակներում Ապահովագրողը հատուցում է սույն Ենթաբաժնի 6.1. կետում նշված իրադարձությունների տեղի ունենալու հետևանքով առաջացած վնասները:

9.2. Ուղեբեռի ամբողջական մասերի կորստի (կորուստ, դրա չհասնելը ժամանման վայր) դեպքում ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսված լինել հատուցման գումարի հաշվարկը հետևյալ եղանակներից որևէ մեկով.

ա) Կորած ուղեբեռի փաստացի արժեքի չափով՝ Վկայագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում: Այն դեպքում, երբ փաստաթղթերով հնարավոր չէ որոշել կորած ուղեբեռի փաստացի արժեքի հստակ մեծությունը, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է ուղեբեռի յուրաքանչյուր կորած կիլոգրամի համար 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ հաշվարկով:

բ) Ուղեբեռի յուրաքանչյուր կորած կիլոգրամի համար 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ հաշվարկով՝ Վկայագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:

9.3. Ուղեբեռի վնասվելու դեպքում ապահովագրության պայմանագրով կարող է նախատեսված լինել հատուցման գումարի հաշվարկը հետևյալ եղանակներից որևէ մեկով.

ա) Վնասված ուղեբեռի վերանորոգման ծախսի չափով՝ Վկայագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում: Այն դեպքում, երբ փաստաթղթերով հնարավոր չէ որոշել վնասված ուղեբեռի վերանորոգման արժեքը, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է ուղեբեռի յուրաքանչյուր վնասված կիլոգրամի համար 5,000 (հինգ հազար) ՀՀ դրամ հաշվարկով:

բ) Ուղեբեռի յուրաքանչյուր վնասված կիլոգրամի համար 5,000 (հինգ հազար) ՀՀ դրամ հաշվարկով՝ Վկայագրով սահմանված ապահովագրական գումարի սահմաններում:





- 9.4. Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրի (Ապահովագրված անձ, Շահառու) կողմից տրամադրված Ուղեբեռի անձնագրում նշված քաշային տեխնիկական բութագրիչների հիման վրա որոշել վնասված կամ կորած Ուղեբեռի քաշը: Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձ, Շահառու) չի կարող ներկայացնել նշված փաստաթղթերը, Ապահովագրողը որոշում է ուղեբեռի քաշը՝ ելնելով հանրային տեղեկատվական աղբյուրներից ստացած նմանատիպ ապրանքների քաշային տեխնիկական բնութագրիչներից:
- 9.5. Ոչնչացած Ուղեբեռի քաշը որոշվում է Փոխադրողի փաստաթղթերի հիման վրա:

**10. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

10.1. Պայմանների սույն Ենթաբաժնի 6.1. կետում նշված Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը, Ապահովագրված անձը կամ Շահառուն պարտավոր է.

10.1.1. ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ԶՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՀԱՅՏՆԵԼ դրա մասին պատահարի վայրի իրավասու մարմիններին (Փոխադրողի ներկայացուցիչ, օդանավակայանի, կայարանի ներկայացուցիչ և այլն) ուղեբեռի վնասման, կորստի կամ ոչնչացման փաստը հավաստող փաստաթղթերը ստանալու համար:

10.1.2. ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ԶՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) դրա մասին Պայմանագրում նշված հեռախոսահամարով տեղյակ պահել Ապահովագրողին, իսկ ուղևորությունից վերադառնալուց հետո ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 10 (ՏԱՍԸ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ընթացքում այդ մասին գրավոր՝ ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում ներկայացնելով, տեղեկացնել Ապահովագրողին, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

10.1.3. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ✓ Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից գրավոր դիմում՝ հատուցում ստանալու վերաբերյալ,
- ✓ Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի պահանջով),
- ✓ Ապահովագրված անձի և Շահառուի անձնագրերը,
- ✓ Տոմս (Էլեկտրոնային տոմսի երթուղի-ստացական),
- ✓ Փոխադրողի կամ այլ իրավասու մարմնի կողմից տրամադրված ուղեբեռի վնասումը, կորուստը կամ ոչնչացումը հավաստող տեղեկանք,
- ✓ Վնասված ուղեբեռի լուսանկարները (ուղեբեռի վնասված իրերը ամբողջությամբ և վնասված հատվածները՝ առանձին-առանձին):

10.1.4. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև.

- ✓ Ապահովագրված անձի հետ համատեղ ուղևորությունը հավաստող փաստաթղթեր՝ պատվերի ձևաթղթեր, ճանապարհորդական փաստաթղթեր (տոմսեր), փոխադրողի կողմից տրված տեղեկանք, ճանապարհորդական գործակալության հետ պայմանագիր, հյուրանոցների կամ այլ կեցավայրերի ամրագրման վճարումներ,
- ✓ Վնասված գույքը ստուգման և (կամ) գնահատման նպատակով,
- ✓ Վնասված ուղեբեռի վերանորոգման ծախսերը հաստատող փաստաթղթեր,
- ✓ Ուղեբեռի գնումը և արժեքը հաստատող վճարային կտրոնները,
- ✓ Մաքսային հայտարարագրերը, tax refund ծառայությունների փաստաթղթերը,
- ✓ Փոխադրողի կամ այլ իրավասու մարմնի կողմից տրամադրված ուղեբեռի վնասումը, կորուստը կամ ոչնչացումը հավաստող տեղեկանք և/կամ նրանց կողմից փոխհատուցում իրականացնելու փաստը հավաստող փաստաթղթեր,
- ✓ Ուղեբեռի ստացական (պիտակներ),
- ✓ Նստեցման կտրոն:

10.2. Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո Ապահովագրողը առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում կազմում է



պատճառաբանված որոշում ապահովագրական հատուցում իրականացնելու կամ այն մերժելու վերաբերյալ, իսկ որոշում կազմելուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում այն առձեռն, էլեկտրոնային տարբերակով կամ փոստային ծառայության միջոցով տրամադրում է Ապահովադիրին, Ապահովագրված անձին, Շահառուին:

- 10.3. Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցումը:
- 10.4. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ է ապահովագրական հատուցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ գրավոր դիմումի) ներկայացնել Ապահովագրական պատահարի վերաբերյալ Ապահովագրողին ԳՐԱՎՈՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ՀԵՏՈ 3 (ԵՐԵՔ) ԱՄՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:
- 10.5 Սահմանված ժամկետում Ապահովադիր (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից Պայմաններով անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ սահմանված 3 (երեք) ամիս ժամկետը երկարաձգելու մասին գրավոր որևէ միջնորդություն չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Պայմանների համաձայն Ապահովադիր կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:
- 10.6 Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը, էլնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև 3 (երեք) ամիս ժամկետով: Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադիր կողմից ներկայացված փաստաթղթերը ստանալուց հետո ոչ ավել քան 2 (երկու) ամիս ժամկետով կասեցնել դիմումի ընթացքը և դիմել անկախ փորձագետի՝ Ապահովադիր կողմից ներկայացված փաստաթղթերի (ներառյալ՝ բժշկական փաստաթղթերի, հաշմանդամության կարգի նշանակման որոշումների) արժանահավատությունը, իսկությունը կամ վավերականությունը ստուգելու համար:
- 10.7 Ապահովագրողն իրավունք ունի ստուգել ներկայացված փաստաթղթերը, հարցումներ անել պատահարի հանգամանքների վերաբերյալ տեղեկատվություն ունեցող կազմակերպություններից:
- 10.8 Ապահովադիրը պարտավոր է գրավոր բացատրություններ տալ Ապահովագրողի՝ ապահովագրական պատահարի վերաբերյալ հարցումներին:
- 10.9 Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձ, Շահառու) ուղեբեռի ոչնչացման, կորստի կամ վնասման համար հատուցում է ստացել երրորդ անձանց կողմից, Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրական հատուցում վճարել ուղեբեռի փաստացի արժեքի կամ վնասի մեծության և երրորդ անձի կողմից ստացված փոխհատուցման գումարի տարբերության չափով, բայց ոչ ավել, քան ապահովագրության պայմանագրով սահմանված ապահովագրական գումարի չափով: Այդպիսի փոխհատուցումների ստացման դեպքում Ապահովադիրը (Ապահովագրված անձ, Շահառու) պարտավոր է դրանց մասին տեղեկացնել Ապահովագրողին ապահովագրական պատահարի վերաբերյալ գրավոր դիմում ներկայացնելիս կամ ԱՆՄԻՋԱՊԵՄ դրանք ստանալուց հետո:
- 10.10 Այն դեպքում, երբ կորած ուղեբեռը վերադարձվել է Ապահովագրված անձին, ապա նա պարտավոր է Ապահովագրողին վերադարձնել ապահովագրական հատուցման գումարը՝ նվազեցված՝ ապահովագրական պատահարի հետևանքով վերադարձված ուղեբեռի վերանորոգման հետ կապված՝ փաստաթղթերով հիմնավորված ծախսերը՝ ոչ ուշ, քան ուղեբեռը վերադարձնելուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

**ԵՆԹԱԲԱԺԻՆ Դ. ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱԽՍԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**5. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ**

- 5.1. Ապահովագրության օբյեկտը Ապահովագրված անձի (Ապահովադիր, Շահառու) գույքային շահերն են՝ կապված կապված չնախատեսված ծախսերի առաջացման հետ:



**6. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ (ՌԻՍԿԵՐ)**

6.1. Պայմանների սույն Ենթաբաժնի համաձայն՝ ապահովագրական պատահար են համարվում ապահովագրության ժամկետում տեղի ունեցած հետևյալ իրադարձությունները, որոնք Ապահովագրված անձի համար առաջացնում են հավելյալ ծախսեր.

6.1.1. «Չվերթի ուշացում» - Ապահովագրված անձի տոմսի վրա նշված և/կամ փոխադրողի կողմից տրված տեղեկանքով սահմանված փոխադրման փաստացի ժամի՝ փաստաթղթերով հիմնավորված ուշացումը հետևյալի արդյունքում՝

ա) ապահովագրության վկայագրում նշված թոփչքներից մեկի 6 (վեց) ժամ և ավելի հետաձգումը, որոնց համար Ապահովագրված անձը գրանցվել է սահմանված կարգով.

բ) ապահովագրության վկայագրում և/կամ տոմսում նշված մեկ կամ մի քանի չվերթների չեղարկում, որը հանգեցրել է Ապահովագրված անձի փոխադրման մեկնարկի ամսաթվի կամ ժամի փոփոխության, որը տվյալ դեպքում իրականացվել է օդային/երկաթուղային/ավտոբուսային կանոնավոր չվացուցակով:

Չվերթի չեղարկման հետևանքով փոխադրման ուշացման ժամանակահատվածը հաշվարկվում է որպես չվացուցակով սահմանված չվերթի ժամի և փաստացի կատարված փոխադրման չամի միջև տարբերություն:

**7. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

7.1. Սույն Ենթաբաժնի շրջանակներում ապահովագրական պատահար չեն համարվում և Ապահովագրողի կողմից չեն հատուցվում հետևյալ իրադարձությունները.

7.1.1. Սույն Ենթաբաժնի 6.1. կետում ուղղակիորեն չնշված որևէ դեպք,

7.1.2. Սույն Ենթաբաժնի 6.1.1. կետով սահմանված դեպքերի մասով չվերթի ուշացումը փաստացի մեկնարկից չի գերազանցում 6 ամբողջական ժամը,

7.1.3. Սույն Ենթաբաժնի 6.1.1. կետով սահմանված չվերթի ուշացումը հաշվարկված է՝ որպես մի քանի փոխադրումների ուշացումների ժամանակահատվածների գումար:

7.2. Սույն Ենթաբաժնի 6.1. կետով նախատեսված դեպքերի մասով ապահովագրական պատահար չեն համարվում հետևյալ իրադարձությունները, որոնք հետևանք են.

ա) այն չվերթի ուշացման/չեղարկման, որին Ապահովագրված անձը (Ապահովագրված անձը) Փոխադրողի կողմից սահմանված կարգով չի գրանցվել,

բ) չվերթի չեղարկումը կամ տեղափոխումը չվացուցակով նախապես սահմանված ժամից ավելի վաղ ժամ, ինչի հետևանքով Ապահովագրված անձի փաստացի փոխադրումն սկսվել է տոմսում նշված ժամից ավելի վաղ,

գ) Փոխադրողի կողմից Ապահովագրված անձի փոխադրումը մերժելը առնվազն հետևյալ պատճառներից որևէ մեկով.

✓ Օվերբուքինգ,

✓ Ուղևորի կողմից փոխադրման կանոնները խախտելու, ինչպես նաև Ապահովագրված անձի՝ ալկոհոլի, թմրանյութերի կամ թունավոր նյութերի ազդեցության տակ լինելու հետևանքով:

դ) 6 (վեց) ամբողջական ժամից պակաս թոփչքի ուշացումը,

ե) Ապահովագրված անձի ուշացում ցանկացած պատճառով, այդ թվում՝ նախորդ չվերթի ուշացման հետևանքով,

զ) Ապահովագրված անձի կողմից ուշացած չվերթով մեկնելուց հրաժարվելու,

է) Նախքան ապահովագրության պայմանագրի կնքումը փոխադրողի կողմից Ապահովագրողը (Ապահովագրված անձը) նախապես տեղեկացվել է չվերթի չեղարկման կամ այլ ժամ տեղափոխվելու մասին:

7.3. Սույն Ենթաբաժնի 6.1. կետով նախատեսված դեպքերի մասով ապահովագրական պատահար չեն համարվում այն իրադարձությունները, որոնք հետևանք են.

ա) Ապահովագրողի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից հակաօրինական գործողությունների կատարման,

բ) Ապահովագրողի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից կանխամտածված գործողությունների կատարման,



գ) Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից ակոհուլի, թմրանյութերի կամ թունավոր նյութերի ազդեցության տակ գտնվելու:

**8. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԿԱՐԳ, ԺԱՄԿԵՏՆԵՐ**

- 8.1. Պայմանագիրն Ապահովագրողի և Ապահովադրի միջև կնքված փաստաթուղթ է, ըստ որի Ապահովագրողն Ապահովագրավճարի դիմաց պարտավորվում է Պայմանագրով և սույն Պայմաններով սահմանված կարգով Ապահովադրին (Ապահովագրված անձին) տրամադրել ապահովագրական հատուցում:
- 8.2. Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ Ապահովադրի կողմից բանավոր կամ գրավոր դիմումի հիման վրա:
- 8.3. Պայմանագիրը կնքելու համար Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել.
  - 8.3.1. Ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի բնօրինակը կամ պատշաճ վավերացված պատճենը, իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման վկայականի և դրա ներդիրների բնօրինակները կամ դրանց պատշաճ վավերացված պատճենները,
  - 8.3.2. Ապահովագրված անձի և Շահառուի անձնագրերի բնօրինակները կամ պատշաճ վավերացված պատճենները,
  - 8.3.3. Երթուղին, ուղևորության ժամկետը,
  - 8.3.4. Այլ փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկի ճշգրիտ գնահատման, ինչպես նաև Պայմանագրի կնքման համար:
- 8.4. Ապահովագրության պայմանագիրը կարող է կնքվել **Փոխադրում «ՄԵԿՆՈՒՄ» և Փոխադրում «ՄԵԿՆՈՒՄ ԵՎ ԺԱՄԱՆՈՒՄ» ժամանակահատվածների համար:**
- 8.5. Ապահովագրության ժամկետը (Ապահովագրողի պատասխանատվությունը) սկսվում է Փոխադրման (մեկնման կամ ժամանման) օրվա ժամը 00:00-ին և ավարտվում է վերջին չվերթի ավարտին հաջորդող օրվա ժամը 24:00-ին:

**9. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ**

- 9.1. Պայմանների սույն Ենթաբաժնի համաձայն Ապահովագրողը հատուցում է սույն Ենթաբաժնի 6.1. կետում նշված իրադարձությունների տեղի ունենալու հետևանքով առաջացած վնասները:
- 9.2. Ապահովագրական պատահարի ի հայտ գալու դեպքում Ապահովագրողի կողմից կարող են նախատեսված լինել չվերթի ուշացման հետևանքով Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից կատարված հետևյալ ծախսերի փոխհատուցում՝ Վկայագրով սույն Ենթաբաժնի համար սահմանված ապահովագրական գումարի սահմաններում.
  - ա) ուշացման յուրաքանչյուր ժամվա համար՝ 7,800 (յոթ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ՝ հաշվարկված ուշացման 6-րդ (վեցերորդ) ամբողջական ժամից սկսած,
  - բ) սննդամթերքի ձեռքբերման ծախսերը՝ փաստացի կատարված ծախսերի չափով, սակայն ուշացման ամբողջ ժամանակահատվածի համար ոչ ավել, քան 12,000 (տասներկու հազար) ՀՀ դրամ: Վերջիններս համարվում են կատարված չվերթի ուշացման 6-րդ ժամից հետո:
  - գ) հյուրանոցում մնալու ծախսերը՝ փաստացի կատարված ծախսերի չափով, ոչ ավել քան 36,500 (երեսունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ,
  - դ) ապահովագրության ժամկետի ընթացքում փոխադրումն իրականացնելու կամ ավարտելու համար նոր էկոնոմ դասի ավիատոմսի (կամ էկոնոմ դասի ավիատոմսին համարժեք այլ փոխադրման միջոցի տոմս) ձեռքբերման ծախսերը՝ նվազեցված տոմսերի վերադարձման դեպքում Փոխադրողի կողմից Ապահովագրված անձին վերադարձված գումարները,
  - ե) այլ ծախսեր, եթե դրանք ուղղակիորեն նշված են ապահովագրության պայմանագրում:

**10. ԿՈՂՄԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ԴԵՊՔՈՒՄ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՁԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

10.1.Սույն Ենթաբաժնի 6.1. կետում նշված Ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադիրը, Ապահովագրված անձը կամ Շահառուն պարտավոր է.



- 10.1.1. ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՆՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ՀԱՅՏՆԵԼ դրա մասին փոխադրողի ներկայացուցչին կամ օդանավակայանի, կայարանի, նավահանգստի համապատասխան մարմիններին պատահարի փաստը և պատճառները հավաստող փաստաթղթեր ստանալու համար:
- 10.1.2. ԱՆՀԱՊԱՂ (ԱՌԱՋԻՆ ԻՍԿ ՆՆԱՐԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ), ոչ ուշ, քան պատահարի մասին հայտնի դառնալու պահից 48 ժամ հետո դրա մասին Պայմանագրում նշված հեռախոսահամարով տեղյակ պահել Ապահովագրողին, իսկ ուղևորությունից վերադառնալուց հետո ՈՉ ՈՒՇ, ՔԱՆ 10 (ՏԱՍԸ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ընթացքում այդ մասին գրավոր՝ ապահովագրական հատուցում ստանալու համար դիմում ներկայացնելով, տեղեկացնել Ապահովագրողին, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 10.1.3. Ապահովագրական հատուցում ստանալու համար Ապահովագրողին ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝
  - ✓ Ապահովագրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից գրավոր դիմում՝ հատուցում ստանալու վերաբերյալ,
  - ✓ Պայմանագրի բնօրինակը (Ապահովագրողի պահանջով),
  - ✓ Ապահովագրված անձի և Շահառուի անձնագրերը,
  - ✓ Տոմս (Էլեկտրոնային տոմսի երթուղի-ստացական),
  - ✓ Փոխադրողի կամ այլ իրավասու մարմնի կողմից տրամադրված չվերթի ուշացումը հավաստող տեղեկանք,
  - ✓ Ապահովագրված անձի՝ ուշացած կամ չեղարկված չվերթին գրանցումը հավաստող փաստաթղթեր՝ նստեցման կտրոն կամ տեղեկանք ավիաընկերությունից:
- 10.1.4. Ապահովագրի (Ապահովագրված անձը, Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ Է Ապահովագրողի պահանջով տրամադրել նաև.
  - ✓ Փոխադրողի, ավիաընկերության կամ նրանց ներկայացուցիչների կողմից պաշտանական նամակ կամ տեղեկանք, որում նշված կլինեն չվերթի ուշացման պատճառները և փոխադրման սկզբի և/կամ ավարտ շի փաստացի ժամերը,
  - ✓ Չվերթի ուշացման ժամանակահատվածում Ապահովագրի (Ապահովագրված անձ, շահառու) կողմից սննդամթերի/առաջին անհրաժեշտության ապրանքների և/կամ ծառայությունների ձեռքբերման ծախսերը և դրանց համար կատարված վճարումները հավաստող փաստաթղթեր,
  - ✓ Ապահովագրված անձի կողմից Փոխադրողին բողոք ներկայացնելու փաստը հավաստող փաստաթղթեր, ինչպես նաև Փոխադրողի կողմից Ապահովագրված անձի չնախատեսված ծախսերի փոխհատուցումը մերժող և մերժման պատճառները ներառող փաստաթուղթ:
- 10.2. Ապահովագրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից ապահովագրական հատուցում տրամադրելու վերաբերյալ գրավոր դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը կազմում է պատճառաբանված որոշում ապահովագրական հատուցում իրականացնելու կամ այն մերժելու վերաբերյալ, իսկ որոշում կազմելուց հետո առավելագույնը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում այն առձեռն, էլեկտրոնային տարբերակով կամ փոստային ծառայության միջոցով տրամադրում է Ապահովագրի, Ապահովագրված անձին, Շահառուին:
- 10.3. Ապահովագրական հատուցում իրականացնելու մասին որոշում կայացնելու օրվանից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Ապահովագրողը վճարում է ապահովագրական հատուցում:
- 10.4. Ապահովագրի (Ապահովագրված անձը, Շահառուն) ՊԱՐՏԱՎՈՐ Է ապահովագրական հատուցման համար պահանջվող բոլոր փաստաթղթերը (բացառությամբ գրավոր դիմումի) ներկայացնել Ապահովագրական պատահարի վերաբերյալ Ապահովագրողին ԳՐԱՎՈՐ ԴԻՄՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ՀԵՏՈ 3 (ԵՐԵՔ) ԱՄՄՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:
- 10.5. Սահմանված ժամկետում Ապահովագրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից Պայմաններով անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու կամ սահմանված 3 (երեք) ամիս ժամկետը երկարաձգելու մասին գրավոր որևէ միջնորդություն չներկայացնելու դեպքում, Ապահովագրողը Պայմանների համաձայն Ապահովագրի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով կարող է մերժել ապահովագրական հատուցման վճարումը, սույն կետում սահմանված ժամկետը լրանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:



- 10.6. Այն դեպքում, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) գրավոր միջնորդություն է ներկայացնում փաստաթղթերի ներկայացման խոչընդոտների կամ այլ պատճառաբանությամբ սահմանված ժամկետը երկարացնելու մասին, ապա Ապահովագրողը, ելնելով տվյալ գործի հանգամանքներից, կարող է այդ ժամկետը երկարաձգել մինչև 3 (երեք) ամիս ժամկետով: Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադիրի կողմից ներկայացված փաստաթղթերը ստանալուց հետո ոչ ավել քան 2 (երկու) ամիս ժամկետով կասեցնել դիմումի ընթացքը և դիմել անկախ փորձագետի՝ Ապահովադիրի կողմից ներկայացված փաստաթղթերի (ներառյալ՝ բժշկական փաստաթղթերի, հաշմանդամության կարգի նշանակման որոշումների) արժանահավատությունը, իսկությունը կամ վավերականությունը ստուգելու համար:
- 10.7. Ապահովագրողն իրավունք ունի ստուգել ներկայացված փաստաթղթերը, հարցումներ անել պատահարի հանգամանքների վերաբերյալ տեղեկատվություն ունեցող կազմակերպություններից:
- 10.8. Ապահովադիրը պարտավոր է գրավոր բացատրություններ տալ Ապահովագրողի՝ ապահովագրական պատահարի վերաբերյալ հարցումներին:

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

**11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՅԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

- 11.1. Ապահովագրական հատուցում չի վճարվում և/կամ Ապահովագրողն իրավունք ունի հրաժարվել ապահովագրական հատուցում վճարելուց՝
  - 11.1.1. Եթե Ապահովագրողը սույն Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի տեղեկացվել ապահովագրական պատահարի մասին և չի ապացուցվել, որ Ապահովագրողի մոտ նման տեղեկությունների բացակայությունը չէր կարող ազդել ապահովագրական հատուցում վճարելու նրա պարտականության վրա,
  - 11.1.2. Եթե ապահովագրական պատահարը հետևանք է՝
    - Ապահովադիրի կողմից հնարավոր ծախսերի նվազեցմանն ուղղված ողջամիտ և իրեն հասանելի միջոցառումների չձեռնարկման,
    - Ապահովադիրի և/կամ Շահառուի դիտավորության,
    - Միջուկային պայթման, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման,
    - Ռազմական գործողությունների, մանևրների կամ այլ ռազմական միջոցառումների,
    - Քաղաքացիական պատերազմների, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների կամ գործադուլների,
    - Պետական մարմինների ցուցմամբ ապահովագրված գույքի բռնագրավման, բռնագանձման կամ ոչնչացման:
- 11.2. Սույն Պայմանագրի Բաժին 5-ի յուրաքանչյուր Ենթաբաժնի համաձայն ապահովագրական պատահար չհամարվող դեպքերում,
- 11.3. ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված այլ դեպքերում:

**12. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ, ՓՈՓՈԽՄԱՆ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 12.1. Ապահովագրության պայմանագիրը դադարում է՝
  - 12.1.1. Եթե դրա ուժի մեջ մտնելուց հետո անհետացել է ապահովագրական պատահարի ի հայտ գալու հավանականությունը և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ապահովագրական պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով:  
Այս դեպքում Ապահովագրողը հետ է վերադարձնում պայմանագրի չլրացած օրերին համամանորեն հաշվարկված ապահովագրավճարը:
  - 12.1.2. Եթե Ապահովագրողի կողմից ամբողջ ծավալով կատարվել են Պայմանագրով սահմանված պարտավորությունները,
  - 12.1.3. Եթե լրացել է դրա գործողության ժամկետը,
  - 12.1.4. Եթե Ապահովագրողը ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով լուծարվել է,
  - 12.1.5. Եթե Դատարանի կողմից որոշում է կայացվել Պայմանագիրը անվավեր ճանաչելու վերաբերյալ,



- 12.1.6. ՀՀ նորմատիվ իրավական ակտերով սահմանված այլ դեպքերում:
- 12.2. Մինչև գործողության ուժի մեջ մտնելը Ապահովադրի պահանջով Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Ապահովադրին են վերադարձվում վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ, եթե Պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- 12.3. Գործողության ուժի մեջ մտնելուց հետո Ապահովադրի պահանջով Ապահովագրության պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Ապահովադրի վճարած ապահովագրավճարներն Ապահովագրողի կողմից վերադարձման ենթակա չեն:
- 12.4. Ապահովագրության պայմանագրի դրույթները կարող են փոփոխվել նոր պայմանագիր կամ առկա պայմանագրին կից համաձայնագիր կնքելու միջոցով, իսկ պայմանագրի գործողության ժամկետի փոփոխման դեպքում՝ նաև ապահովագրավճարների միջև հաշվանցում իրականացնելու հնարավորությամբ, ընդ որում՝
  - 12.4.1. Ապահովադրի (Ապահովագրված անձի) նախաձեռնությամբ Վկայագրի գործողության ընդհանուր ժամկետի պահպանմամբ ժամկետի սկզբի ամսաթվի փոփոխության դեպքում Ապահովադրի լրացուցիչ ապահովագրավճարի չի վճարում:
  - 12.4.2. Ապահովադրի (Ապահովագրված անձի) նախաձեռնությամբ Վկայագրի գործողության ժամկետի երկարացման դեպքում Ապահովադրի վճարում է լրացուցիչ ապահովագրավճար՝ գործող ապահովագրական սակագներին համամասնորեն:
  - 12.4.3. Ապահովադրի (Ապահովագրված անձի) նախաձեռնությամբ Վկայագրի գործողության ժամկետի կրճատման դեպքում Ապահովադրին է վերադարձվում հին ու նոր վկայագրերի ապահովագրավճարների միջև տարբերությունը:
- 12.5. Ապահովագրության պայմանագրի փոփոխության նպատակով նոր պայմանագրի կնքման հետ կապված բոլոր գործողություններն Ապահովադրի կողմից իրականացվում են ապահովագրության պայմանագրում նշված գործողության ժամկետի սկզբից ոչ ուշ:
- 12.6. Ապահովագրության պայմանագրի (Վկայագրի) կորստի դեպքում Ապահովադրի (Ապահովագրված անձի) դիմումի հիման վրա նրան է տրվում պայմանագրի (Վկայագրի) կրկնօրինակը, որն արտացոլում է նախկին պայմանագրի բոլոր պայմանները նույնությամբ:

**13. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 13.1. Ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում *Ապահովադրին իրավունք ունի՝*
  - 13.1.1. Վաղաժամկետ դադարեցնել ապահովագրության պայմանագիրը՝ այդ մասին Ապահովագրողին պարտադիր գրավոր ծանուցելով,
  - 13.1.2. Դժբախտ պատահարներից ապահովագրության դեպքում՝ (եթե պայմանագիրը կնքված է Ապահովադրի օգտին) նշանակել Շահառու, ով իրավունք կունենա ստանալ ապահովագրական հատուցում իր մահվան դեպքում,
  - 13.1.3. Ապահովագրության պայմանագրի կորստի դեպքում ստանալ դրա կրկնօրինակը:
- 13.2. *Ապահովադրի պարտավոր է՝*
  - 13.2.1. Ապահովագրողին հայտնել Ապահովագրավճարի չափը որոշելու համար զգալի նշանակություն ունեցող հավաստի տեղեկատվություն,
  - 13.2.2. Ապահովագրավճարը վճարել ապահովագրության պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում,
  - 13.2.3. Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության ի հայտ գալու դեպքում անմիջապես ձեռնարկել միջոցներ վնասի նվազեցման ուղղությամբ,
  - 13.2.4. Ապահովագրողին ներկայացնել ապահովագրական պատահարի հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի կրկնօրինակները՝ համաձայն սույն Պայմանագրի Բաժին 5-ի յուրաքանչյուր Ենթաբաժնի,
  - 13.2.5. Կատարել սույն Պայմանագրով և Ապահովագրության պայմանագրով սահմանված իր բոլոր պարտավորությունները:
- 13.3. *Ապահովագրողն իրավունք ունի՝*



- 13.3.1. Ստուգել Ապահովադրի կողմից տրամադրված տեղեկատվությունը, ինչպես նաև Ապահովադրի կողմից պայմանագրով սահմանված իր պարտավորությունների կատարումը,
- 13.3.2. Անհրաժեշտության դեպքում հարցումներ կատարել համապատասխան իրավասու մարմիններին,
- 13.3.3. Պահանջել ապահովագրության պայմանագրի դադարեցում այն դեպքում, եթե պարզվի, որ Ապահովադիրը ապահովագրության պայմանագրի կնքման ժամանակ Ապահովագրողին հայտնել է Ապահովագրված անձի մասին ոչ հավաստի տեղեկատվություն,
- 13.3.4. Դադարեցնել ապահովագրության պայմանագիրը Ապահովադրի կողմից Ապահովագրավճարի՝ պայմանագրով սահմանված ժամկետում չվճարելու դեպքում,
- 13.3.5. Պատահարը չդիտարկել ապահովագրական, եթե դրա բնույթը, հանգամանքները և վրա հասնելու ժամկետները չեն համապատասխանում սույն Պայմաններով տրված սահմանումներին, ինչպես նաև եթե Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից չեն կատարվել սույն Պայմանների 13.2.3.-13.2.5. կետերով սահմանված պարտավորությունները,
- 13.3.6. Կայացնել որոշում պատահարը ապահովագրական համարելու վերաբերյալ, որոշել ապահովագրական հատուցման չափը, ինչպես նաև վճարելու ապահովագրական հատուցում՝
  - Սույն Պայմաններով սահմանված փաստաթղթերի չվավերացված օրինակների հիման վրա,
  - Ապահովագրական պատահարի տեղի ունենալու հանգամանքների գծով կատարած ինքնուրույն ուսումնասիրությունների արդյունքների (նամակագրություն, այդ թվում՝ էլեկտրոնային, տրված վկայություններ և այլն) հիման վրա:
 Սույն իրավունքը Ապահովագրողի կողմից իրացվում է ընտրողաբար՝ կախված տվյալ դեպքի հանգամանքներից և ոչ մի կերպ չի կարող համարվել Ապահովագրողի պարտավորություն:
- 13.4. *Ապահովագրողը պարտավոր է՝*
  - 13.4.1. Ապահովագրական պատահար ի հայտ գալու դեպքում բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո վճարել ապահովագրական հատուցում (կամ մերժել ապահովագրական հատուցման վճարումը) սույն Պայմաններով սահմանված ժամկետներում,
  - 13.4.2. Դեպքը ապահովագրական պատահար չդիտարկելու պարագայում սույն Պայմաններով սահմանված ժամկետներում այդ մասին ծանուցել դիմումատուին՝ նշելով տվյալ որոշման ընդունման հիմնավոր պատճառները,
  - 13.4.3. Ապահովել Ապահովադրի անձնական տվյալների չհրապարակումը և ամբողջականությունը՝ ՀՀ գործող Օրենսդրությանը համապատասխան:
- 13.5. Այն դեպքում, երբ ապահովագրության պայմանագիրը կնքված է երրորդ կողմի՝ Ապահովագրված անձի, Շահառուի օգտին, ՎԵՐՋԻՆՍ՝
  - 13.5.1. Պարտավոր է կատարել Ապահովադրի՝ սույն Պայմանների 13.2.3 և 13.2.4 կետերով սահմանված պարտավորությունները,
  - 13.5.2. Պարտավոր է ներկայացնել իր գույքային շահի առկայությունը և/կամ ապահովագրական հատուցում ստանալու իրավունքը հավաստող փաստաթղթեր (Ապահովագրողի պահանջով),
  - 13.5.3. Իրավունք ունի օգտվել Ապահովադրի՝ սույն Պայմանների 13.1.2 և 13.1.3 դրույթներով սահմանված իրավունքներից, իսկ իրավաբանական անձ Ապահովադրի լուծարման դեպքում՝ ստանձնել Ապահովադրի՝ սույն Պայմանների 13.2.2 դրույթով սահմանված պարտավորությունները:

**14. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԻ ՄԵԾԱՑՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

14.1. Ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում Ապահովադիրը (Ապահովագրված անձը) պարտավոր է Ապահովագրողին անհապաղ տեղեկացնել ապահովագրության պայմանագրի կնքման պահին Ապահովագրողին հայտնած հանգամանքների՝ իրեն հայտնի դարձած զգալի փոփոխությունների մասին, եթե այդ փոփոխությունները կարող են էականորեն ազդել ապահովագրական ռիսկի մեծության վրա: Բոլոր դեպքերում, էական են համարվում ապահովագրության պայմանագրով (Վկայագրով) և Պայմաններով սահմանված դրույթների ցանկացած փոփոխություն:





- 14.2. Ապահովագրական ռիսկի մեծացմանը հանգեցնող հանգամանքների վերաբերյալ տեղեկատվության ստացումից հետո Ապահովագրողն իրավունք ունի Ապահովադրից պահանջել ապահովագրության պայմանագրի պայմանների փոփոխության իրականացում կամ ապահովագրական ռիսկի մեծացմանը համամասնորեն հավելյալ ապահովագրավճարի վճարում: Եթե Ապահովադիրը չի համաձայնվում ապահովագրության պայմանագրում կատարել փոփոխություններ կամ վճարել հավելյալ ապահովագրավճար, Ապահովագրողն իրավունք ունի դադարեցնել ապահովագրության պայմանագիրը ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:
- 14.3. Եթե Ապահովադրի (Ապահովագրված անձի) կողմից չի պահպանվում ապահովագրական ռիսկի մեծացման վերաբերյալ Ապահովագրողին տեղեկացնելու պարտավորության կատարումը, Ապահովագրողն իրավունք ունի դադարեցնել ապահովագրության պայմանագիրը և Ապահովադրից պահանջել իր կողմից կրած վնասների փոխհատուցում:
- 14.4. Ապահովագրողն իրավունք չունի պահանջել ապահովագրության պայմանագրի դադարեցում, եթե ապահովագրական ռիսկի մեծացման վրա ազդող հանգամանքներն արդեն վերացել են:

## 15. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

- 15.1. Սույն Պայմանների համաձայն կնքված ապահովագրության պայմանագրի հետ կապված վեճերը լուծվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով:
- 15.2. Սույն Պայմանների 15.1 կետով նախատեսված կարգով վեճի չկարգավորման դեպքում վեճը փոխանցվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի քննության կամ Դատարան՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: